


# ՀԱՅՐԵՆԻՔ



## ՅԱԿՈՒԻԿ ԵՓԵՆՏԻ Յ. ՄԿՐԵԱՆ

Գիտութեան բուրասանին մէջ նոր բացուած ծաղիկ մը, բնութեան ամենէն բնտիր ձիրքերովը օժտեալ, շարժութ օր խամբեցաւ թառամեցաւ յաւիտենականութեան ծոցն երթալու համար:

Այս ծաղիկն էր Կ. Պօլսոյ Պատրիարքական փոխանորդ Մկրեան Գեր. Տ. Յովհաննէս քահանայի հարազատ որդին ՅԱԿՈՒԻԿ ԵՓԵՆՏԻ ՄԿՐԵԱՆ հեղափոխութեան, հայրենասէր, գիտուն և բարեպաշտ պատանին որ իւր իննևե տասնամեայ գարունը կնքեց պանդուխտ հողի վրայ հայրենի երկրին կարօտովը լցուած:

Հանգուցելոյն յուղարկաւորութեան տըխուր հանդէսը կատարուեցաւ կիրակի օր Ի Մայր եկեղեցին, ուր ներկայ կը գտնուէին Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, Ամեն. Տ. Խաչատուր Ս. Կաթողիկոս, Գեր. Սիմոն եպիսկոպոս, մայրաքաղաքի եկեղեցեաց քարոզիչ Հարք. Ազգային երեսփոխանք, Գաղաքական Կոմիտէի անդամք, լրագրողներ և 5000 ի չափ յուղարկաւորաց խումբն բաղմութիւն մը:

Հանգուցելոյն շքեղութեանը մեծ վայլ տըուաւ Ամեն. Ս. Պատրիարք Հայրը որ առանց եկեղեցական զգեստուց դագաղին ետեւէն կը քալէր ինչպէս բարեխոյստակ հանգուցելոյն վրայ ունեցան հայրական ամբար սիրոյն: Երբ դագաղը Մայր եկեղեցին հասաւ, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը սրտառուչ և իմաստալից դամբանականաւ մը պատուեց հանգուցելոյն մարմինը և նորա ծաղիկ հասակի մէջ ունեցած գրական հանճարը, ազնիւ սիրտն ու հոգին դրուատելով, լացաւ և իրեն հետ ամենքն ալ լացուց:

Միևնոյն շքեղութեամբ և հանդիսի հանգուցելոյն մարմինը մինչև Լանկա տարուելով, անտի Պալատի գերեզմանատունը փոխադրուեցաւ և հոն ամփոփուեցաւ:

Վաղամեակի հանգուցելոյն՝ մեր և ամենուն սիրելի ու յարգելի պատանւոյն աղջկորով ծնողաց, ազգականաց և բարեկամաց լացն ու վիշտը անհնար է պատմել, որք հանգուցելոյն դագաղին շուրջը բողբոջ հրաժեշտի ողջոյն տալով չէին յագենար:

Ամեն ոք որ կը ճանչնար զինքն ի մտոյ և լաւ հասկցած էր անոր հեղահոգի սիրտը, բաղմաբեղուն միտքը և քրիստոնէական ազնիւ զգացումները, անհնար է որ չը խոստովանի թէ նորա կեանքը Ազգին մէջ արժանաւոր դաւակներ յարուցանելու օրինակ և առաջնորդ կրնայ ըլլալ:

Սա Պաղչէճիկի իւր հայրենի երկրին աղքատիկ վարժարանին մէջ նախնական ուսմանը անհրաժեշտ վերջը 1869ին մայրաքաղաք եկաւ և իւր ծնողաց որդեգորով խնամոց ներքև Խասգիւղի Շահ-Նուպար վարժարանը մտաւ աշակերտելու համար, ուր երեք տարի ամբողջ գիշեր և ցերեկ, անդու և անքուն ուսման պարապելով, հիւանդութեան փոքրիկ նշաններ սկսան տեսնուիլ վրան, ինչպէս սովորական է տեսնուիլ յոգնածան տըրնութեամբ վատակելոց վրայ: Այս պատճառաւ թողուց վարժարանը, որ շատ ծանր

էր իր սրտին և զոր յանչափս կը սիրէր իւր գիտութեան խանձարուր:

Շահ-Նուպար վարժարանի դասատուք և ուսանողք ցաւեցան և շատ ցաւեցան այսպիսի ուսումնասէր աշակերտէ և հեղահամբոյր ընկերէ մը բաժնուհիւնուն վրայ. ուստի շատ անգամ այցելութեան կուգային իրեն և վարժարանի վիճակին վրայ կը խորհրդակցէին: Սա անմիջապէս սկսաւ հեռաւոր երկիրներ գտնուող գիտնական անձանց հետ թըղթակցութեամբք յարաբերութիւն հաստատել, ինչպէս են Ռուսաստան ծերունի Գաբրիէլ Պատկանեանի և Տիբիսի ազգային լըրագրապետաց, և ուրիշ գիտնական ազգայնոց հետ, որոնք հանգուցելոյն տաղանդը, հայրենասիրական զգացումները, վառվառն երեւակայութիւնը տեսնելով և Կ. Պօլսոյ ազգային լրագրաց մէջ մերթ քմերթ նորա բանասիրական, պատմական, հնարասական

կը հիւանային և պատիւ կը համարէին այնպիսի մատաղատունի բայց հանճարալից պատանւոյ մը հետ բարեկամութիւն հաստատել:

Հանգուցելոյն վարժարանէն մեկնելէն վերջը ամբողջ չորս տարի կեանք ունեցաւ. իւր հիւանդագին աւուրց մէջ երբեք գրիչը չէր թողուր, զի միտքը բաղմաբեղուն էր և կուզէր դուրս տալ ինչ որ կերկնէր: Ամենեւին չէր յոգներ և ոչ իսկ կը ճանճարար գրելէ. շատ անգամ Ազգին ներկայ վիճակին և ապագային վրայ խորհրդածելով կը ցաւէր և դեղ դարման կը մտածէր. բոլոր այցելուները անխտիր կը յարգէր ու կը պատուէր, և զինքը միանգամ տեսնողները ալ այնուհետև բարեկամ կը լային իրեն: Հիւանդութիւնը օր օրի կը սաստկանար, բայց նա կը ժպտէր ու կ'սիրուէր երբ գրիչը ձեռքը կ'առնուր կամ երբ նոր երկասիրութիւն մը ցուցնէին իրեն, մանաւանդ երբ խորմեան սրբազանի կամ ծերունի Պատկանեանի գրչէն ելած ըլլար այդպէս յանչափս կը սիրէր և մինչև իսկ կը պաշտէր:

Այսպիսի դրամու կեանք մը ի հարկէ պիտի ծանրացնէր իւր հիւանդագին վիճակը որ անգարմանելի ըլլալուն նշանները ցուցնել սկսած էր. այնպէս որ բժիշկները գրելէ և վերժանութենէ բողբոջին արգիլելին զինքը սակայն նա չը լսեց բժշկաց խորհրդատու ձայնին և սկսաւ երկասիրութեան մը խմբագրութեամբը զբաղիլ և այս եղաւ «Նախաշաւիղ գիտութեանց և արուեստից» անուն ընտիր մատենիկը, որ մեռնելէն 10 օր առաջ ի լոյս ելաւ և կարծես իւր հիւանդագին տառապանաց մէջ մեծ միջթարութիւն տուաւ:

Այնուհետև սկսաւ բաղմաշարքար կեանք մը վարել, տուայտեցաւ և հիւժեցաւ. բայց նոյն իսկ անկողնին մէջ լրագրի կը վնասուէր և կը կարգար և եթէ մերթ քմերթ կամ դժկամակէն, կուլար և կը հառաչէր: Շատ անգամ իւր վիճակին վրայ կը խորհրդածէր և բոյժ ու դարման կ'որոնէր. բայց միանգամայն չէր մտնար իւր աղեկէջ ծնողքն ու ազգականները միջթարել որոնք գիշեր ցե-

րեկ իւր մահիճը չըջապատած ի սրտէ կողբային նորա այս յուսահատական վիճակին վրայ: Վերջապէս չորեքշաբթի օրէն սկսաւ սրտամկիկ խօսքեր քնել իւր ծնողացը, յօժարակամ Հաղորդութիւն, աղօթք և հըսուկում խնդրել, զԱստուած օգնութեան կանչել և անոր գթութիւնն իր վրայ ու օրհնութիւնն իւր ընտանեաց վրայ հայցել:

Սովայն մարդկային ամեն ջանք և աշխատութիւն անօգուտ եղան. անողք մահն արդէն մօտեցած և իւր աւարն առնել տանելու պատրաստուած էր. շարժութ առաւօտ իւր սիրելի ծնողքը և սիրասուն քոյրերն, եղբայրներն ու ազգականները քովէն չը հեռացուց և քրիստոնէական ու որդիական զգացմամբ վառուած զամէնքը մի առ մի դրկեց, համբուրեց և աղօթքի հրաւիրեց: Շատ սրտաշարժ և տխուր էր այս տեսարանը. ինքն արդէն գունաթափ եղած, հիւ-

ւստենականութեան յուսով լցուած սէր-տանքով ամենքն ալ խօսեցաւ անոնց հետ, միջթարութիւններ ուղղեց և երկնային ուղեւորութեան անհրաժեշտ ժամը թին իր ծաղիկ կենաց գարունը կնքեց ճշմարիտ հաւատոյցով մը յուսալիւր հոգեւոր, անվատ սրտիւ և անխտով մտքով:

Մարդ չկրնար իր արցունքը բռնել, երբ իւր կենաց վերջին վայրկեաններուն մէջ ըրած խօսքերը լսէ կամ կարդայ:

«Հայրիկս և մայրիկս, միմեջ հրեշտակաւ տեսիլ պատանին, մի լայք այսուհետև, «այլ աղօթեցէք. ամպերուն մէջէն զՅիսուս և կը տեսնուի կը վերակոչէ զիս. ես չեմ մեռնիր, այլ նոր կեանք մը կ'սկսիմ յաւիտենականութեան մէջ: Աղօթեցէք, ուր որ ալ «իմիք, եկեղեցեաց մէջ, հրապարակներու «վրայ և տուներու մէջ. ձեզի յիշատակ կը «թողում երկասիրած մատենիկս, որպէս զի «անով յիշէք զիս»:

«Հայրիկս, 17 տարեկան հասակէս ի վեր «սկսայ քեզի օգնել Մկրեան բաղմաճիւղ «դերգաստանին խնամք տանելու համար. «բայց բաղքը չը թողուց. հիմայ երկնային «չրով կը պապակիմ և կերթամ ծարաւս լե- «ցընելու»:

«Երկնից երանութեան մէջ տեղ պատ- «րաստուած է ինձ, ես կը տեսնեմ զայդ, «ուստի կերթամ յանմահութիւն»:

«Հայրիկ, Ձեզ կը թողում խել մը գրու- «թիւններ, պիտանինեք պահեցէք, ան- «պէտները նետեցէք. իսկ քերական մ'ու- «նիմ չիմամ, ինչպէս կուզէք, այնպէս ը- «րէք: Գուք մեծ մարդ էք ինձի համար, «զի ծնողական պարտաւորութենէն աւելին «ըրէք, ամէն խնամք տարիք, կը թեցիք և «մեծցուցիք զիս»:

«Իսկ դուք, քոյրեր և եղբայրներ, հնա- «դանդ եղիք իրարու, սիրեցէք զիրար, «ինչպէս ես զձեզ սիրեցի միշտ. մի լաք վա- «ղաթառամ զաւկի և եղբոր մը վրայ զոր «կը կորսնցնէք յաշխարհի, բայց նա կեն- «դանի է միշտ յերկինս»:





